ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՍ ԱՎԱԶ» ՍՊԸ կողմից ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-055-0185 թաղամասում 10,7195 հա հողամասում ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նախաձեռնության վերաբերյալ հանրային լսումների (1-ին լսում)

Արտաշատ համայնք **« 25 » ապրիլի 2025թ.**

Ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենքի 16-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշման պահանջներով, 2025թ. մարտի 27-ին, ժամը՝ 12.00-ին, ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ԱՍ ԱՎԱԶ» ՍՊԸ կողմից ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-055-0185 թաղամասում 10,7195 հա հողամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նախաձեռնության վերաբերյալ 1-ին հանրային լսումը, մասնակցությամբ Արտաշատ համայնքի ղեկավարի 19.03.2025թ-ի թիվ 99 կարգադրությամբ հանրային լսման պատասխանատու և վարող նշանակված, Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Խ.Պողոսյանի, Հովտաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Ալեքսանյանի, Հովտաշեն բնակավայրի բնակիչների, ինչպես նաև Ընկերության ներկայացուցիչների:

Լսումների մեկնարկն ազդարարեց հանրային լսման պատասխանատու և լսումը վարող՝ Խ.Պողոսյանը, ով նախ ներկայացրեց հանրային քննարկման ներկաներին, այնուհետև, հակիրճ ներկայացրեց Ընկերության կողմից նախատեսվող գործունեությունն ու կազմակերպված հանրային լսումների նպատակը: Ըստ վերջինիս, նկատի ունենալով, որ Ընկերության կողմից ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքն ընգրկված է Հովտաշեն բնակավայրի վարչական սահմաններում, ուստի Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից, Ընկերության հետ համաձայնեցված կարգով, որպես հանրային լսման վայր սահմանվել է Հովտաշեն բնակավայրի վարչական

ղեկավարի նստավայրը, իսկ անցկացման օրն ու ժամը՝ 2025թ-ի ապրիլի 22-ը, ժամը՝ 12.00-ն:

Խ.Պողոսյանը տեղեկացրեց նաև, որ հանրային քննարկման վայրի և ժամի վերաբերյալ հանրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ իրազեկվել է, որի մասին համապատասխան հայտարարություններ են հրապարակվել ինչպես Արտաշատի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում, այնպես էլ՝ «Առավոտ» օրաթերթում: Բացի այդ, հանրային քննարկման դրված Ընկերության նախաձեռնության վերաբերյալ ազդակիր՝ Հովտաշեն բնակավայրի բնակիչներին սահմանված կարգով իրազեկելու նպատակով, նախաձեռնության վերաբերյալ բոլոր փաստաթղթային հիմքերը տրամադրվել են նաև Հովտաշեն բնակավայրի վարչական ղեկավարին:

Հովտաշեն բնակավայրի վարչական ղեկավարը նորկայացրեց, որ նախատեսվող հանքավայրը գտնվում է բնակավայրից 1 կմ-ից ավել հեռու, և հնարավոր արդյունահանման դեպքում բեռնատար մեքենեները չեն տեղաշարժվելու բնակավայրի միջով և անհանգստություն չեն պատճառի բնակիչներին: Ողջունելով նախաձեռնությունը՝ բնակավայրի վարչական ղեկավար հաջողություն մաղթեց ձեռնարկողներին:

Այնուհետև, հանրային քնարկման պատասխանատու՝ Խ.Պողոսյանը խոսքը փոխանցեց Ընկերության ներկայացուցիչ Հրաչյա Կարապետյանին՝ Ընկերության նախաձեռնության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

Ողջունելով ներկաներին, Ընկերության ներկայացուցիչ՝ Հ. Կարապետյանը պարզաբանեց, որ հանրային քննարկման է դրված Ընկերության կողմից Հովտաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-055-0185 թաղամասում 10,7195 հա հողամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նախաձեռնությունը: Ներկայումս հանրային քննարկման է դրված Ընկերության կողմից ընդամենը երկրաբանական ուսումնասիրությունների թույլտվություն ստանալու հարցը, և որ հաջողելու պարագայում այն դրականորեն կազդի բնակավայրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման վրա:

Ընկերության նախաձեռնության երկրաբանական և տեխնիկական մասը ներկայացրեց Արտակ Անտոնյանը, ով նշեց, որ հայցվող տարածքը գտնվում է բնակավայրից 1,4 կմ հեռու: Հնարավոր ավազների առկայության վերաբերյալ

տեղեկատվությունը մակերեսային է և նախնական: Դաշտային աշխատանքներն իրականացվելու են՝ համապատասխան երկրաբանական հորատանցքեր փորելու միջոցով՝ ճշտելու համար մակերեսային ծածկող հողային, կավավազակոպճային շերտի հզորությունը: Ընդհանուր առմամբ լաբորատոր փորձաքննությունների համար դրանցից կիրականացվի նմուշառում, որից հետո կատարվելու է հետլիցքի և հարթեցման միջոցով ռեկուլտիվացիոն աշխատանքներ: Հետևաբար, իրականացվելիք աշխատանքների փոքր ծավալների հաշվառմամբ, կբացառվի շրջակա միջավայրին հասցվող վնասները:

Արտակ Անտոնյանը տեղեկացրեց նաև, որ հայցվող տարածքը Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 10,7195 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամաս է, որը հանդիսանում է քաղաքացու սեփականություն:

Խ.Պողոսյանը ողջունելով Ընկերության նախաձեռնությունը՝ նշեց, որ համայնքը մշտապես պատրաստակամ է օրենքով սահմանված բոլոր միջոցներով աջակցելու տնտեսական գործունեություն նախաձեռնող ցանկացած տնտեսվարողի, այնուհանդերձ, յուրաքանչյուր նմանատիպ դեպքում, որպես առաջնայնություն, պետք է քննարկվի նաև համայնքի շահը, ու թեև ներկա փուլում Ընկերությունը նախաձեռնել է միայն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, այնուամենայնիվ, համայնք-տնտեսվարող փոխգործակցությունը պետք է կառուցվի այն տրամաբանությամբ, որ համայնքն իր մասնաբաժինն ունենա տնտեսական գործունեության արդյունքում Ընկերության կողմից գեներացվող շահույթում, ինչը կարող է արտահայտվել թե՛ համայնքի սոցիալ-տնտեսական կյանքում ամենամյա մասհանումների, և թե՛ տեխնիկական աջակցության տրամադրելու տեսքով:

Խ.Պողոսյանը հավելեց նաև, որ համայնքի կողմից շարունակաբար ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ համայնքի տարածքում ընդերքի արդյունահանմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունն օրենսդրության պահանջների խստիվ պահպանմամբ ապահովելու, այդ թվում՝ բեռնատարների գերբեռնվածության, փոշու արտանետումների նվազեցման, ճանապարհների և շրջակա միջավայրի աղտոտվածության կանխարգելման ուղղությամբ:

Հանրային քննարկմանը ներկա Հովտաշեն բնակավայրի բնակիչները ևս ողջունեցին Ընկերության նախաձեռնությունը՝ իրենց հերթին նշելով, որ հաջողելու

պարագայում այն դրականորեն կազդի բնակավայրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման վրա:

Ամփոփելով քննարկումը, Խ.Պողոսյանը շնորհակալություն հայտնեց հանրային քննարկման մասնակիցներին, այն համարեց կայացած և նշեց, որ ցանկացած տնտեսական գործունեություն ողջունելի է համայնքի կողմից, եթե իհարկե, դրանց արդյունքում պահպանվում են ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներն ու հնարավորինս կանխվում շրջակա միջավայրին հասցվող վնասները:

Կից հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ «1» թերթ, քննարկման ընթացքի տեսաձայնագրությունը՝ « 1 » կրիչով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ՝

«ԱՍ ԱՎԱԶ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝ ԳԵՎՈՐԳ ՄԻՐՈՅԱՆ